— Տոել եմ, ճշմարիտ է, բայց ես չեմ ուզում ուրիշի սիրոյ փշրանքովը կշտանալ...

Ես թէեւ հասկացայ, թէ ինչ ասաց նա, բայց դարձեալ հարցրի.

— Ի՞նչ է նշանակում այդ:

Նա իսկոյն չպատասխանեց, բայց ես նկատեցի, որ նրա աչքերը վառւում էին բարկութեան բոցով. եւ նա վերջապէս պատասխանեց բոլորովին կատաղած կերպով.

— Ես գիտէի, որ դու խիղճ չունես, բայց հիմա տեսնում եմ, որ դու խելք էլ չունես: Ես չեմ կարող սիրել այն մարդուն, որ խաբել գիտե...

— Ուրեմն մեր մէջ ամէն ինչ վերջացած է:

— Հէնց այն րոպէից, երբ «Կաթնաղբիւրի» ձորում, Սօնան քո մօտ նստած, իր անբախտութիւնն էր պատմում...

Մարօի խօսքերն որքան եւ վիրաւորական լինէին, որքան եւ կծու լինէին, բայց նրանք ուղիղ էին: Ես զգում էի իմ մեղքը, ո՛չ բարկանալու եւ ո՛չ ներողութիւն խնդրելու իրաւունք չունէի...

Առժամանակեայ լռութիւնից յետոյ նա հարցրուց.

— Եթէ դու ուզում ես, որ մենք դարձեալ բարեկամներ մնանք, պէտք է սիրես Սօնային:

— Ես ուզում եմ, որ մենք մնանք այնպէս, ինչպէս էինք առաջ...

— Դա անցաւ: Պատասխան տուր, ինչ բանի համար հարցնում եմ քեզանից: Կը սիրե՞ս Սօնային, թէ ոչ:

— Իմ խօսքը հէնց այն է...

Նա կանգնեց կէս ճանապարհի վրայ. ես նշմարեցի, նա ամբողջ մարմնով դողում էր, եւ գունատոած դէմքի վրայ նկարոած էր վայրենի կատաղութիւն:

— Այստեղ մենք բաժանւում ենք, — ասաց նա աշխատելով զսպել իր վրդովմունքը: — Դու այլեւս չես կարող ոտք կոխել որսորդի վրանը: Սպասի՛ր այստեղ. ես կը գնամ, կուղարկեմ քո ձին եւ զէնքերը, ուր որ ուզում ես, գնայ:

— Ուրեմն դու արտաքսում ես ինձ:

— Ինչպէս կուզես, այնպէս հասկացիր...

— Անգո՛ւթ...

Նա շուռ տոեց երեսը, որ ես չտեսնեմ եւ շարունակեց շտապով գնալ դէպի ուխտաւորների բանակը: Որքան էլ խռոված լինէի ես, դարձեալ չէր